

ԹՐՈՉՈՒԿ

,ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՈՒ Բ Բ Ա Ր Ա Վ

Ապրիլ 10-ին հայ գիւղացիները հաւաքաբար մի հանրագութիւն սերկայացրին կուսակալ նազըմ փաշային: Պահանջն այս է—կամ ապահովութիւն երկրը մշակելու կամ ճանապարհ դուրս գաղթելու:

Ո՞ւր բարով, հայ ժողովուրդ, գէալի նոռասատան, Պարսկաստան: Մենք խոստովանում ենք, որ դու աւերակների մէջ ես, մերկ, սովոր ենթակայ, որ քեզ անխնայ կոտորում են այժմ էլ գիւղում, քաղաքում և ճանապարհներին: Այս էլ պարզ է, որ բոլոր չարիքսարսափները հասցրեց մեր գլխին և դեռ հասցնում է հարեմի լակոտ սուլթանը իր գայլերի խմբերով: Սակայն գաղթելով միթէ պիտի ազատուի դու ամենելին ոչ երեկոյ սխալն այսօր կրկնել դա մահացու մեղք է: 1894 թ. Բուլանդից և Բասենից հազարաւոր յարդիկ գաղթեցին. ոռոսահայերը նրանց տեղ ապաստան տվին, կերակրեցին մէկ, հինգ, ութ ամիս հազարաւոր նէրներ թափւեցան, բայց գաղթականներն ազատեցան դրանով, ոչ երբէք: Նախ, գաղթողներից կէսը թիւքքը քիւրդը և սովոր կոսորեց, իսկ նուսանայաստան համարները լարում, ինչպէս և այժմ, մեր խեղճ եղաքյուների առաջ գաղթականներն ազատեցան չող, սեփական հող, տուն չունեին, որով ամենքը փչացան, ցիրուցան եղան, թողոր, նենդաւոր, ստոր ոռու կառավարութիւնը իւր դաւելն էր լարում, ինչպէս և այժմ, մեր խեղճ եղաքյուների առաջ: Գաղթող, դռնէ դուռ ընկնող ժողովոդի համար կեանք չկայ, սա բոլոր ազգերի մէջ փորձով ապացուցւած մի փաստ է, ճշմարտութիւն:

Ժողովուրդ, դու թիւքքից խնդրում ես ապահովութիւն. սուլթանը որ մեռնի, քեզ չի տայ այդ. մնում է քո երկրորդ պայմանը՝ գաղթել ուր բարով:

Մենք վշտերի մէջ խեղճած, մոռանում ենք մի հանգամանք: Հայը կոտորւեց, բայց չէ՞ որ նրա հետքայքայեց և թիւքք կառավարութիւնը: Բունապետը կորցրեց իւր բիւրաւոր ֆլահներին, ստրուկներին, մի ամբողջ երկիր չի մշակում այլևս. իսկ անտեսագիտութեան օրէնքն անողոք է, ուր չկայ հոգի մշակութիւն՝

այնտեղ չկայ կեանք բոլորի համար: Կատարեալ անիշխանութիւն է տիրում զօքերի, զօրապետների և բոլոր ժառայողների մէջ, գրամ, ամսական չկայ ոչ մի տեղ. իսկ ցնորւած սուլթան գիշեր, ցերեկ գուռում է. „Պարտք, պարտք վերցնել բիւրաւոր ոսկիներ“: Այդ երբէք չի ազատի նրան անկումից:

Եւ այժմ, այս հանգամանքների մէջ, հայ եղբայր, դու ուզում ես գաղթել՝ փախչել մի այլ տեղ նոյնպէս մեռնելու համար, չէ՞ որ դա անարդ մահ է, մեռիր սուրբ հոգիր վրայ:

Եւ այժմ, երբ գետերով արիւն թափելուց յետոյ հայկական խնդրի լուծման ժամը զարկում է, երբ մի ամբողջ ազգի բաղդը պիտի որոշչի լին ել չլին ելով՝ դու հայրենիքդ ուրանում, փախչում ես: Գատապարտելի՛ է այդ: Միթէ մոռացար բռնապետի կախաղանները, բանտերի հազարաւոր շղթաների շառաչը, դու այդքան շուտ ուրացար դաշտում ընկած քաջ նահանգները... Դրանք՝ քո հարազատ զաւակներն են, յեղափոխութիւնը քեզնով եղաւ և քեզ համար, իսկ դու այս ճգնաժամին ուր բարով:


Ո՞չ, դու դաւաճանում ես հայրենիքդ, սուրբ գործը... Դու կը լինես դաւաճան, մի՛ գաղթիր:

ՎԱՍՊՈՒԻՐՍԿԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵ

(“ԹՈՌՈՒՑԻԿ ԹԵՌԹ” № 4, 12 ապրիլի)

ՀԵՏԵՒԱՆՔԸ ԻՆՉ ԵԼԱԿ

Աղոնուց է արդեօք, երբ սուլթանը անխնայ կոտորածի և թալանի ենթարկելով հայաբնակ վայրերը, վերցնականապէս նահարեց հայ ժողովուրդը: Վաղոնց է արդեօք, երբ Տաճկահայաստանում կեանքը բոլորովին կաշկանդւել էր՝ երթևեկութիւնը ընդհատւել, արհետը դադարել առևետուրը կանգ առել երբ ասպարէզը մնացել էր միայն զինուորներին, համբուխականներին, որոնք բորենիների վոհմակների նման վխտում էին անթաղ դիակների, աւերակների, վլատակների մէջ և շարունակում իրենց գիշատիչ ճանկերով քրքրել



ժողովրդի՝ արիւնաքամ կուրծքը: Վաղո՞ց է, երբ կառավարութիւնը ամեն մի կոտորածից յետոյ տօնում էր հանդիսաւոր կերպով իր փայլուն յաղթանակը և զինուրական երաժշտութեան ձայնով խլացնում թշւառ որբացեալների գառը հեկեկանքը: Վաղո՞ց է, երբ սուլթանը և իր վսեմաշուք էֆեսիները ներոնական հըրձւանքով դիտում էին այս դժոխային պատկերը և սըրտի բերկութեամբ մտածում: Թէ արիւնաքամ եղած, որւայ ապրուստի կարօտ հայ ժողովրդի բողոքիչ ձայնը խսպառ մարեցաւ և թէ իրենք կարող են անվրդով կերպով անձնատուր լինել իրենց հարեմական շւայտանքներին...

Վաղո՞ց է այս բոլորը...

Սակայն ի՞նչ եղաւ կոտորածի հետեանքը: արդարացա՞ն արդեօք սուլթանի իղձերը:

Աշխատաւոր տարրը կամ կոտորւել է, կամ նիւթականապէս քայբայւել՝ հարկ տառլ չկայ: առետուրը շատ պակասել է, երթեկեկութիւնը դժւարացել՝ մաքստող չկայ: Գանձարանը դատարկ է: Թիւրքիայի սնանկութեան մօտ լինելը ակնյայտնի փաստ է, որի վրայ շեշտում է մինչև իսկ ոռուս « Խօսօ Երեմ » լրագիրը և անկեղծ կերպով (այս դէպքում հաւատում ենք նրա անկեղծութեան) ողբում բարեկամ Թիւրքիայի տնտեսական գրութիւնը: Ռոճիկ չեն ստանում ոչ միայն զինուրները և ստորին ծառայողները, այլև նրա բարձրաստիճան պաշտօնեաները: Վաղաժամ չէ՞ր կառավարութեան յաղթական տօնախմբութիւնը, երբ այսօր նա պէտք է զգում սահմաններն ամրացնելու, բայց չէ կարողանում միջոցների պակասութեան պատճառով: Վաղաժամ չէ՞ր պաշտօնեաների ցնծութիւնը, երբ այսօր իրենց շատ երջանիկ են համարում, եթէ յաջողում են հաւաքածակի մի մասը: Վաղաժամ չէ՞ր սուլթանի հրձւանքը, երբ իր պալատի խոհարարները գործադուլ են անում ռոճիկ չստանալու համար...

Դարձեալ ի՞նչ հետեւանք եղաւ:

Մի կողմը թողնելով պալատական զանազան ինտրիգաներ, որոնք գիշեր ցերեկ հանդստութիւն չեն տալիս Սուլթան-Համբէին և գուցէ հասցնեն նրան խելագարութեան աստիճանին, մենք հետեւնք բուն կեանքի մէջ կատարող երևոյթներին:

Մահմեդական տարրը, այդ տգիտութեան, անշարժութեան մէջ խորասուզւած տարրը ուժեղ կերպով ցնցեց: « Նա սկսեց աւելի լաւ հասկանալ իր դրութիւնը, սկսեց աւելի համարձակ բողոքել բռնապետութեան բռնազրօսիկ քայլերի գէմ: Կարոյ տաճիկ հասարակութիւնը, նկատելով հայերի մէջ գաղթելու նշաններ, բողոքով դիմեց կառավարութեան, պահանջելով ձեռք առնել հարկաւոր միջոցները ապահովացնել հայերի գրութիւնը որպէսզի նրանք չգաղթեն, որովհետեւ, աւելացնում են տաճիկները՝ « մենք առանց հա-

յերի չենք կարող ապրել »: Եւ մինչև այսօր Վանայ հարուստ վաճառական տաճիկ դասը օրինակ առնելով միւս քաղաքներից, ուր կոտորած է եղել, խոչընդուռ է հանդիսանում հայերի վրայ յարձակում գործելուն: Բայց մի հանգամանք, որ մեզ համար աւելի միսիթարական է, քա « Երիտասարդ Թիւրքիոյ » կուսակցութեան զօրեղանալը և լայնանալն է: Այդ կուսակցութիւնը, թէ գեռ ոչ յեղափոխական, ինչպէս մենք ենք հասկանում, արդէն ահագին քանակութեամբ հետևող ներ է կարողանում ձեռք բերել վերջին ժամանակներս թէ Թիւրքիայում և թէ արտասահմանում, իր երկու գլխաւոր օրգանների՝ « Միզան » և « Մէշկէրէթ »-ի միջոցով կատաղի կուր է մզում Արդուլ-Համբէի բռնակալութեան գէմ, ջերմ համակրանք է ցոյց տալիս հայերին և առաջարկում միացեալ ուժերով տանել ընդհանուր կուրւը:

Դարձեալ ի՞նչ հետեանք ունեցան կոտորածները:

Երկրի միւս տարրերը, թէ նա հաշտ աչքով չէին նայում սուլթանի կառավարութեան վրայ, բայց չէին ել բողոքում: Խսկ հայկական կոտորածներն առիթ տւեցին կառավարութեան և դրանց մէջ ևս ընդհարումներ առաջանալուն: Ցնցւել են ասորիները և այժմ կառավարութեան աչքում նրանք նոյնն են, ինչ որ հայերը Տէրսիմի գրգերին ճնշելու համար գեռսրանից մի երկու ամիս առաջ էր Շաքիրը ահագին զօրք պահանջում:

Ահա թէ ինչ նոր հանգամանքներ ստեղծեցան կոտորածից յետոյ, ինչ պատուհաններ առաջացրեց սուլթանի ծրագիրը իրեն՝ սուլթանի համար: Տեսնենք այժմ, յաջողւեց սուլթանին համնել գոնէ իր անմիջական նպատակին: Ընկճեցին արդեօք հայերը այդ սոսկալի ջարդից յետոյ, մարեցաւ նրանց ձայնը, յուսահան եղան նրանք: — Ոչ երբէք: Բոպէապէս վհատած ժողովուրդը դարձեալ սկսեց կազդուրւել, հաւաքել իր ուժերը և առաջ տանել իր սկսած գործը: Ցեղափոխական կազմակերպութիւնն աւելի ոյժ ստացաւ, աւելի լայնացաւ և աւելի մեծ հեղինակութիւն ձեռք բերեց: Նա մեծ յաջողութեամբ կարողանում է շարունակել « Դաշնակցութեան » սկսած կուրւը, որ նա վարում էր Շաքիրի Տաճկահայաստան ոտ գնելու օրից այն է՝ թոյլ չտալ այդ ճիւղին ընդունել տալ իր անմիտ բարենորոգումները: Ցեղափոխական կազմակերպութիւնը կարողանում է այս դժւար բոպէին խրախուսել, հաւատ ներշնչել հայ հասարակութեան այն թուլամորթ գասի մէջ, որը շւարած իր անտանելի դրութիւնից, երազում է իր փրկութիւնը գաղթականութեան մէջ գտնել:

Հայ ժողովուրդը նորից ոտի կը կանգնի, թափ կը տայ իր ուսերը և բռնակալութեան գէմ կը հանի նորանոր յեղափոխական գնդեր, աւելի բազմաթիւ, աւելի կատաղի և լցւած վըեժինդրական վեհ զգացումով:

Ահա այժմ նա ցոյց կը տայ, որ ինքն այն առասպելական վիշտան է, որի կտրտած գլուխների փոխանակ բունում են անընդհատ նորերը...

Այսպէս անսպասելի եղան կոտորածների հետեւանքները սուլթանի համար, և որքան նա աւելի առաջ գնայ իր վայրենի ընթացքի մէջ այնքան աւելի կը բազմացնի իր թշնամիների թիւը, անքան աւելի կը կատաղեցնի և կը բորբոքի նրանց ընդդիմադրական. ոգին: Սուլթանը պիտի ընկճւի: դա անխուսափելի է:

Հայ ժողովուրդը ոտի կը կանգնի և այժմ նա մի-այնակ չէ. նրա հետ են երկրի միւս տարրերը. նրա հետ են և հեռու, Միջերկրական ծովում գտնող քա-ջարի կրէտացիք, որոնք յոնական անկախութեան հա-մար արեան գետեր են թափել, որոնք այդ անկախու-թիւնից յետոյ 3-4 անգամ նորից ապստամբւել են, ամեն անգամ չարաչար ջարդւել, բայց և այնպէս յոյս-ները չեն կորել և այսօր նորից գլուխ են բարձրաց-նում այդ անարդ լծից ազատւելու: Գլուխ բարձրացնենք և մենք, հաւաքենք մեր բոլոր ուժերը.—սուլթանի կառավարութիւնը քայլայման մօտ է,—տանք մեր վեր-ջին հարւածը:

Ա Հ Ա Բ Ե Կ Ի Չ Ն Ե Բ Ի Կ Ի Ի Ի Բ

(Ն Ա Մ Ա Կ Պ Ո Լ Ս Ւ Ց)

16/28 ապրիլ 96 թ.

Պոլիս, այդ ահ ու սարսափի քաղաքը, ապրիլ 16-ին հադիսատես եղաւ յեղափոխական նշանաւոր գէպքի մը սուլթանի լիրը կառավարութեան դէմ. այդ գէպ-քը եկաւ կրկին ցնցել պաշեազուկի մայրաքաղաքը և ապտակել ժողովորին մեռելային թմրութիւնը: Նոյն օրը ժամը 8-ին „Դաշնակցութեան“ աշաբեկիչները Ղալաթիս, Քարաքէօյի հրապարակին վրայ թիւքը ոս-տիկանութեան դէմ կատաղաբար կը կուէին ճիշտ հոն, ուր շաբաթ մը առաջ իրենց մէկ արիստիրու ընկերը քաջութեան և յանդնութեան ապացոյց մը տւած էր:

Եղիսա Շահպաղի ծանօթ գէպքէն վերջը Քարաքէյը ոստիկանական խիստ հսկողութեան տակ առնւած էր: Դաշնակցական աշաբեկիչներ այդ կողմերը միշտ ման կուգային աստնցմէ մէկը երբ եւնի-խանի—ուր Շահ-քաղի գրասենեակը կը գտնի—սանդուխէն վեր կելնէր, ոստիկան մը յանկարծ կասկածելով կուզէ բռնել և կեցնել կտրիճ երիտասարդը իսկոյն ազով կը քաշէ առաջն ատրճանակը բայց սուրի հարւած մը կը թունէ զայն. այն ատեն կը քաշէ երկրորդը և գնդակի մէկ հարւածով այդ յանդուքն ուստիկանին կամ համար մը բռնել կամ այնպէս կը ձևացնէին, հաւաք-ւած գրամերը խարերաներու կամ ոստիկանութեան ձեռք կը հասնին, սակայն Քարաքէօյի գէպքը ազդու Շեղում մը եղաւ այդ միաւ և շահախնդիր կարծիքին, պյուկ զգացումի տէր ամեն մարդ համոզած է թէ՝ յե-ղափոխական գործին նւիրուած լուման ժողովուրդը կը պատագնէ իրեն վայրենի թշնամին դէմ: Սակայն մե-ծամանութիւնը այնքան անսամօթ ու անխիղճ, այնքան ընչափաղ է, որ կը նախընտրէ գաշոյնի հարւածի մը զոհ գնալ, քան թէ չնչին գումար մը նւիրել ազատու-թեան գործին, որ միակ փրկութեան առաջնորդն է բազմաչափար հայ ժողովորին:

Փողոցները դատարկւած, յշներ իրենց սովորութեան համեմատ, խանութեներու ծակերէն աթոռներ, գաւա-զաներ կը նետեն փախստականներուն առջև անոնց անցքը գժւարացնելու համար, սակայն մեր հերոսները կը պարտաւորին այդ ապիկարուներուն պատամիանել ատրճանակով: Վերջապէս տեսնելով, որ աւելի առաջ երթաւ անհնար է ետ կը դառնան. թիւքը բեռնակիր մը կուզէ բռնել զանոնք, պյու վիրաւոր կիյնայ: Դար-ձեաւ Քարաքէյը կուգան, ուր միշտ նոյն սարսափը կը տիրէր: ահաբեկիչներէն մին շարած կը հարկա-դրւի իր ընկերներէն բաժնւիլ և Խավեար-խանէն անցնե-լով կանհետանայ:

Զմշկածագցի Կարապետ առանձին հրապարակին վթ-րայ կը վազէ, քարամանցի յոյն մը անոր մօտեցած ե-տեէն պիտի բռնէր զայն, եթէ ատրճանակի գնդակ մը իսկոյն չը հեռացնէր այդ անպիտանը. գնդակը արձա-կող ահաբեկիչը կը միանայ Կարապետին: Սակայն Կա-րապետ հակառակ իր ընկերոջ թափանձանաց կը բաժ-նւի անկէ և գինետանի մը նկուզին մէջ կը բռնւի: Բոնւած է նաև թէքիրաւողցի Աւոն:

Ոստիկանը տեղն ու տեղը մեռած էր, իսկ մացած-ները վիրաւորւած: Բուն սպանողները և վիրաւորողնե-րը ազատ են և կսպասեն պատեհ ժամուն:

Երբ ահաբեկիչները կը հեռանան, ժանդարմներ, ոստիկաններ, լրտեսներ, որոնք պահ մը առաջ շան պէս անյայտ անկիւններ ապաստանած էին, գուրս կել-լեն և հոն տան գործաւորներու բահերն ու բրիչներն առնելով կը յարձակին այդ երկու ձերբակալածնե-րու վրայ և իրենց մոնկոլական բոլոր գազանութե-նովը կսկսին ծեծել անմինայ, այնպէս որ երբ պահա-կանոց հասած էին, հէք երիտասարդները արեան զանգւածներ դարձած էին: Ժողովուրդը սարսափահահար-այդ հակամարդկային տեսարանին առջև, կակսի բողոքի ձայն բարձրացնել ոստիկանութեան գազանութեան դէմ:

Այդ գիւղապնական կրիւը խորունկ տպաւորութիւն գործեց հանրութեան մորին վրայ, որ կը կարծէր թէ ոստիկանութեան անգթութեան չնորհիւ, յեղափոխա-կանները պյուկ գոյութիւն չունին Յեղափոխական գոր-ծունկութիւնը ընդհանուր երկիւղ մը առաջ բերած է հասարակութեան վրայ, մանաւանդ հայ հարուստ-ներու վրայ, որոնք կատարելապէս կը մը այլ մը ի-րենց կացութեան դժնդակութիւնը: Մեր հարուստները կը կարծէին թէ, կամ այնպէս կը ձևացնէին, հաւաք-ւած գրամերը խարերաներու կամ ոստիկանութեան ձեռք կը հասնին, սակայն Քարաքէօյի գէպքը ազդու Շեղում մը եղաւ այդ միաւ և շահախնդիր կարծիքին, պյուկ զգացումի տէր ամեն մարդ համոզած է թէ՝ յե-ղափոխական գործին նւիրուած լուման ժողովուրդը կը պատագնէ իրեն վայրենի թշնամին դէմ: Սակայն մե-ծամանութիւնը այնքան անսամօթ ու անխիղճ, այնքան ընչափաղ է, որ կը նախընտրէ գաշոյնի հարւածի մը զոհ գնալ, քան թէ չնչին գումար մը նւիրել ազատու-թեան գործին, որ միակ փրկութեան առաջնորդն է բազմաչափար հայ ժողովորին:

Այդ կարգի հարուստներուն կեանքը մեզի համար հիւլէի չափ նշանակութիւն չունի և ամենապատիկ իրդ-ձի խայթ մը անգամ չի տանջեր մեզ, եթէ ամենքն ալ մէկ ջողվ վերնան:

* *

Վայսերական իրատէ մ'ելած էր տասն օրէն փախըստականները ձերբակալելու համար, սակայն ոստիկանները հայերու մօտենալէ կը վախնան: Տեղանոր միայն ընչառաղութենէ կամ անօժութենէ մղւած լրտեսներ քանի մը հայեր ձերբակալելով զանոնք լաւ մը կողապելէ ու քանի մ'օր պահելէ վերջ արձակած են: Տակաւին կարևոր ձերբակալութիւն մը եղած չէ: Ակտի սուլթանին այս իրատէն ալ միւսներուն վրայ պիտի աւելնայ: Պատահական ձերբակալութիւններ կը նեն, կանագեն, կը ծեծեն հայերը: այս արատէն ալ միւսներուն վրայ պիտի աւելնայ:

Սուազին անդամը չէ, որ "Դաշնակցութեան" ահաբեկիչները ոստիկանութեան հետ գործ կունենան: ամեն ատեն յեղափոխական սուրբ անունը անազարտ պահեցին այդ անձնուրաց հոգիները, միշտ դէմ դրին և կուեցան: Անոնց ցցուցած անցեհեր յանդնութիւնը պաշտելի է:

Ուրան կառավարութիւնը ինկան կը կարծէ հայութիւնը նոյնքան նա կը բարձրանայ: թիւը ու հարստութիւնը կը պակսին հետզհետէ, բայց հասարակ ժողովուրդին մէջ կը խորւի բարյական այնպիսի ոյժ մը, որ ահարկու կը դառնայ: ներկայ հայկական կեանքը կը ճնի այնպիսի անձնիրութիւն մը, որու դէմ շատ անզօր են պոռնիկ ոստիկանութեան ըոլոր միջոցները: Հայութիւնը յեղափոխութեան մարմացումը կը ներկայացնէ այսօր:

Ամեն մարդ կարծես ակամայ, զօրաւոր հոսանքէ մը մղեալ, կուզէ նետւիլ յեղափոխական կրկէսին մէջ: Քանտ, տանջանք ու աքսոր մեր յաջորդութեան կը նըպաստեն, վերջին կոտորածները աւելի արմատացուցին հայերուն մէջ յեղափոխական ոգին: Այլևս մահը դառն չերւիր մեզի, կախաղանին վրայ արհամարանքով կը նայինք:

Ձերբակալութեանց վերջին զբաղմունքը վայրկենապէս ընդհատել տւած է մեր պատրիարքին հրաժարեցման խնդիրը: Այդ ինդրով ամենէն աւելի զբաղողն է հիմա հերայի կառավարիչը, որ կը յուսայ երդողն մէջ առանձին տեղ մը դրաւել ինչպէս ոստիկանութեան նախարարը և ուշիկեացի հասան փաշան: Այդ մարդուն կարծիքն է թէ՝ քանի որ կարելի չեղաւ պատրիարքը հրաժարեցնել պէտք է հրաժարեցնել ժողովականները և այդպէս կարելի կըլլայ բոլորովին ուժասպառ ընել աննկուն պատրիարքը: Ի՞երայի կառավարիչը գտած է կը լրսի երեն հաւատարիմ հայեր ու անոնց բերնովը ջանադիր է շշնջել ժողովականներուն որ, կծիկէն քակւած չւանի պէս, մէկիկ մէկիկ քաշին: Զենք կարծեր որ մեր ժողովականներն այնչափ վատոգի ըլլան և թոյլ տան, որ Ի՞երայի կառավարիչը մը շահերուն թելադրութեամբը, յաղթանակ տանի պատրիարքանի դէմ:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

ԱՐԵԱԿԱՆ ԳԻՒՂԻ ԿՐԻՒԾ

(Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Ց)

15/27 ապրիլ 96 թ.

"Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը" կոտորածի ժամանակ. թէ զէնքերով և թէ հայդուկային խմբերով կարելի եղած սահմանի մէջ օդնելով մեր անզէն և անպաշտպան ժողովադրին՝ պաշտպանեց զայն ընդհանուր աղետի դէմ և անզամ մը ևս գործնականապէս ցոյց տաւ, որ ինքն է հարազատ զաւակ տանջւող ժողովը դիմին, հաւատարիմ իր վսեմ կոչման և հեռի զանազան դժուց և փառամիրական ձգտութերէ: Արշաւանի և Բասենին մի քանի գիւղերուն մղած հերոսական կուրը և անոնց անսպասելի ազատումը փայլուն փաստեր են:

Սակայն՝ "Դաշնակցութիւնը" այս չափով չըբաւականցաւ: Մինչ ամեն ոք աղետին սարսափին ներբեւ չէր համարձակէր գուրս գալ տուներէն, դաշնակցականները արհամարձելով ամեն վտանգ, մէկ կողմէ զօհերու դիակները կը հաւաքէին, միւս կողմէ նօմթութեան տուայտանց տակ հեծող թշւառներու արցունքները կը սրբէին: Կոտորածի և թշալանի արդիւնք եղող անդործութիւնը երբ ժողովուրդը սովամահ ընել կսպանար Դաշնակցութիւնը իր դրամական նպաստներով օդութիւնեան կը համարէր նոյն վատահոգի համար անձնութեան ամենագարշելի պատկերը կը ներկայացնէին: Այդ վատ արարածները իրենց կաշէին վախնալով՝ հարիւրաւոր զօհերու սուրբ յիշատակին հանդէպ և այնչափ այրիացածներու և որբացածներու լաց ու կոծին անփոյթ, նետուեցան իրենց դաշին գիրկը և առանց խղճահարութեան ստորագրեցին շնորհակալութեան հետագիր մը և Մազպաթա" մը, որով յանցաւոր կը հանէին հայ ժողովուրդը: Զեմ կարող առանց ամօթի յայտնել, որ այդ վատերուն ընկերացան և քահանաներ, որոնք մինչդեռ իրեր կրօնի պաշտօնեայ, Ճշմարտութեան համար խաչուիլ կը քարոզեն: Բայց այլևս ժողովուրդը անոնց արժանիքն ալ հասկացած է:

Բայց այդ վատ դասակարգին ընթացքը որչափ որ զմեզ զարմացնելու բնոյթ չունի, այնչափ ալ հետի է որ և է նշանակութիւն ունենալէ: Այդ դասակարգի շահերը արդէն և ոչ մի ժամանակ կարող են հաշտել այն պայմաններուն հետ, զորս կը պահանջեն տընտեսապէս նեղւող ժողովուրդին շահերը: Եւ եթէ կոտորածէն առաջ հարուստը յեղափոխականներու ութերուն տակ կը սողար, այդ տիրող հանդանքներուն հետևանքն էր, ու եղբ կոտորածները ստեղծեցին իրեն նպաստաւոր պայմաններ, նա փութաց վերսկսել իր նախկին գերրը:

Սակայն թող նա վատահի այդ կարձատե, խարուսիկ երկոյթներուն, իսկ մենք հաւատացած ենք, որ ժողովը ական իրաւունքի դաար պիտի յաղթանակէ և այդ դասակարգը պիտի ընկնի իր կեղեքութերով ձեռք բերած բարձունքէն ու պիտի փուրի ժողովուրդին ուրբե-

րուն տակ: Եւ արդէն այդ տեսակէտէն մղւած քաղաքիս նշայ Յեղափոխական Դաշնակցութեան՝ կերպոնական Կօմիտէն Մթուուցիկ թերթեր՝ տարածեց ժողովրդին մէջ և բացատրելով տիրող յանդամանքներու խութիւնը և նշանակութիւնը հորդորեց զիշափիլ և հաստատ հաւատք ունենալ մեր գատի յաղթանակին: Այդ Մթուուցիկները՝ ունեցան իրենց բարերար ազգեցութիւնը՝ գաղթականութեան հուանքին առջև աստիճան մը առնելով և վիշտաւծ ժողովրդի սրտին մէջ յօւսոյ կայծ մը արծարծելով:

Խոկ ի՞նչ կընէ կառավարութիւնը, գա արդէն յայտնի է նա իր սովորական աչքակապութիւնը ու խեղատակութիւնը կը շարունակէ, այսինքն երկիրը բարեկարգելու գործով կը քաղաքի: Մի քանի հայերու փոլիսի և ժանտարմի պաշտօն տւած է, որոնք ըորս ամիսէ ի վեր նոյն իսկ կէս ամսաթոշակ ստացած ըրլինելով՝ իրենց պաշտօնական զգեստներն ալ իրենց դրամով պատրաստել տւած են: Ոչ նւազ ուշագրաւերելոյթ մըն է նաև հայ ժանդարմներու ձեռքը հրացան (անշուշտ վիշացած) տեսնել առանց փամփուշտի: Հայ ժանդարմները ընկերակցութեամբ թիւրքերու կը շրջին շուկաները և փողոցները, քաղաքին բարեկարգութեան հսկելու պաշտօնով, թիւրք ժանդարմները հրացաներու հետ ունին և փամփուշտ, իսկ հայերը միմի այն հրացան: Աչա թէ ի՞նչ է բարեկարգութիւնը սուլթանի կառավարութեան ըմբոնած եղանակով: Անկեղծ գոհանակութեամբ կարձանագրեմ, որ հայ ժողովուրդը խիստ ատելութեամբ կը վերաբերէի գէպի այդ հայ պաշտօնեանները.

* *

Թիւրք խուժանը կարնոյ դաշտի գրեթէ ամրով հայ գիւղերը կողոպտելէ վերջ, մեծ բազմութեամբ, որուն թիւրք կը համնէր մօտ 3000-ի, յարձակւեցաւ Արշաւան, գիւղի վրայ: Այդ գիւղի մէջ նԴաշնակցութիւնը՝ ունէր արդէն իր կազմակերպութիւնը և տեղական հայդուկային խումբը իր միջոցներով կարգին զինած: Դոքա կանխապէս նախատեսելով սպառնացող վանգը, նախապէս գիւղին շուրջը իրենց համար լաւ դիրքեր պատրաստած՝ գիշեր ցերեկ կը հսկէն և յարձակումն կսպասէին: Յարձակումը կսկսի ամեն կողմէ, իսկ մեր քաջերը ամենայն անվեհերութեամբ գնդակեներ կը տեղան թշնամին, գլխին: Թշնամին սարսափահար կը փախչի, բայց բազմապատկելով իր ուժը, կատաղի յարձակում մը ևս կը գործէ, սակայն դարձեալ չարաչար պարտած ետ կը փախչի: Այսպէս նա հինգ անդամ, հետզիւտէ աւելցնելով իր ուժը, կարշաւէ գիւղին վրայ, բայց մեր անվեհեր հայդուկներուն գընդակները միշտ փախուստ կը դարձնեն զայն սարսափահար: Յարձակումն առաջին վայրկեանին քէհեաները կառաջարկեն անձնատուր ընել գուցէ ասով կեանքերուն ինայեն, բայց մեր քաջերը կը աստական պատեցէր մենք մեռնենք, յետոյ գուք անձնատուր եղեք, ցորչափ կենդանի ենք, այդ ցածութիւնը ընել երբէք յանձն չենք առներ և ոչ ալ կը թողանք, որ ուրիշներն ընեն: Աչա այսպէս Արշաւան գիւղը քաջութեամբ պաշտպանեց ինքնը ի նախատին լշակեր սուլթանի կառավարութեան: Այս գիւղի ազատումովը ազատւեցան՝ հինձի,

թվանձ, Մուտուրիկա և Սուլթանուկ գիւղերը, որոնք կը գտնէին այնպիսի դիրքի մը վրայ, որ զանոնք կողապտելու համար պայման է նաև Արշաւան գիւղը իբրև արգելք բառնալ մէջտեղէ:

Կառավարութիւնը չկրցաւ տանել այս գիւղի ազատումը, նա անմիջապէս այդ գիւղը աւելքելու նոր միաք մը յացաւ: Այդ գէպքերէն մի քանի օր վերջ նա պաշտօնեաները ուղարկեց այն տեղ, որոնք կանչելով քէհեաները և երիտասարդները, զանազան սպառնալիքների տակ պահանջեցին իրենց յանձնել զէնքերը: Առաջինները ամենայն վատութեամբ կը յանձնեն իրենց սեփիհական զէնքերը, իսկ վերջինները կընդիմանան մինչեւ վերջ հակառակ իրենց տրւած գժողույթին չարչարանքներուն: Այս երիտասարդներէն հինգը և մէկ ծերունի քահանայ ձերբակալելով ու քաղաք բերւելով կը բանտարկւեն, սակայն դարձեալ երիտասարդութիւնը անդրգուելի կը մնայ, մնաւանդ երբ կը կարդայ այն Թօսուցիկ թերթը, որով Կեդրոնական Կօմիտէն հրաւեր կը կարդար այդ գիւղի երիտասարդներուն դիմադրել մինչև վերջ, հակառակ պարագայի մէջ իրենց զէնքերով դուրս գալ գիւղէն և միանալ Դաշնակցութեան միւս հայդուկային խմբերուն: Կառավարութիւնը տեսնելով անոնց յամառութիւնը և գուցէ խնդիրը չեանբացնելու համար, ազատ արձակեց յիշեալ բանտարկեալները և ետ կեցաւ իր չար գիտումն: Կառավարութեան հրամանաւ կոտորածէն 2-3 ամիս վերջ հարկահանները կերթան գիւղերը: Թալանւած գիւղերէն դատարկածեն կը վերադառնան, իսկ Արշաւան գիւղէն կը գանձնեն 100 ոսկի: Պաշտօնեանները լսելով հարկերու գանձումը չափազանց կուրախանան թէ, այլևս իրենց ամսականները կը վճարեն: Բայց ի՞նչ յուսախարութիւն, երբ կը լսեն. որ մինակ Արշաւանն 100 լիրա գանձաւծ է, ու այն ատեն կատղած անէծքներ կը տեղան սովորանի գլխին և կը դիտեն թէ, եթէ այս գանձութիւնները չպատահէին, ամեն գիւղէ հարիւրական լիրա կը գանձակին և մեր թոշակները կը վճարեն: Այս իրողութիւնը կարող է հաստատել այն փաստը թէ, սովորանը իր գանձութիւններով ոչ թէ հայկական հարցը կը մեռցնէ, այլ երկրը աղքատութեան մատնելով և թիւրք տարրը ևս իր գէմ լարելով՝ իր գահին կործանումը կը փութացնէ:

Հ Ա Վ Ա Կ Վ Ա Ն Ի Ց

21/2 ապրիլ 96 թ

Մարտ 18-ից մէկէն սկսւեց աշնան մեծ եղեռնագործութիւնը նոյն խստութեամբ և նոյն հարէմի լակոտի հրամանով: Մարտ 18-ից մինչև 20-ը քիւրքերը գործի և սուլիկանների տրամադրութեան տակ պաշարեցին և զարկեցին հետևեալ տեղերը. Յարա գիւղաբաղարը (բոլորն ասորի), որի մօտ մեծ կուին եղաւ: Ասորիները գիմադրում են: Մելիքի ընտանիքից 3 հոգի սպասւած և մի հոգի վիրաւորաւած են: Ոսկերակ սպասւած են 13 հայ, 5 վիրաւոր: Գարման գիւղից գոյցը համելուն պէս վասպուրականի հայ Յեղա-

փոխական Դաշնակցութեան” Կեդրոնական Կօմիտէն մի հայդուկային խումբ զրկեց օգնութեան: Նախ քան խմբի հասնելը, եկեղեցին՝ պաշարելով, և հոգի և 1 քահանայ գնդակահամար են լինում: Թափւեցաւ և կառավարական զօրքը նոյն տեղը: Դրսէ գուրս լսում ենք, թէ մեր խմբի և զօրքի մէջ մեծ ընդհարում է տեղի ունեցած: Հաւշեսար (ասորի) 4 հոգի սպանած են:

Մի հայ երիտասարդ Այգեստանի եզերքին թիւրքերը խողխողել են:

Այսօր լուր հասաւ թէ պաշարւած է Ազգա գիւղը: Այս սարսափների մէջ լիբր նոր Աստիկան-հիւպատոսը ընկած է քաղաքում ապաստանած խեղճ գիւղացիների ետևից և ապահովութիւն խոստանալով բռնի ուզում է գաւառ: Քաշել:

Սուլթանական բարենորոգիչ յանձնաժողովը ուզում է յանկարծ հեռանալ Վանից, անշուշտ կոտորածի ծրագիրը կազմել վերջացրել են:

Դաշնակցութեան տերրօրիստ Սախոն գնդակի մի հարածով գլորեց նոյն գիւղացի՝ Խասանց Օհաննէսին, վերջինս անգութ մատնիչ էր և շեխի նոյն գիւղի ահագին հողերը խլելու ժամանակ ամեն կերպ օգնեց թիւրքին, Տէրրօրիստը ազատ:

* *

17/30 մարտ 96 թ.

“Բարենորոգիչ Յանձնախումբը” երկու ամբողջ ամիս Վանում նստեց և ոչինչ չկարողացաւ անել: Որ Կողմը դարձրին, իրենց կողմից առանց զոհի հայերին ջարդելու չափողեցաւ: Աերջերս սկսեցին չափչիկն Այգեստանի փողոցները, այդիների տարածութիւնը, հայերի բռնած դիրքը և մի յատակագիծ կազմելով՝ “Կարագաղ-միշամի” անւամբ, զրկեցին Բարձր Դուռը: Բարենորոգիչները քաղաք նոր մոնելիս զարմացել էին ընդարձակ այգիների ու խիտ ծառերի համար և առաջարկել էին արդ բռնոր ծառերը կտրել:

Վալին և բարենորոգիչները սաստիկ գրդուած են: Վալին հակառակ է կոտորածին. այդ պատճառով տեղական տաճիկները ասում են նրան, անւանելով Նազարէմ Մուխսի:

Օրերս յանկարծակի սկսած կոտորածը, որի թիւր 45 հասաւ, առ այժմ դադարեց, իսկ անհատական սպանութիւնները մեծ յաջողութեամբ քաղաքում, ճանապարհներին, գիւղում և ամեն տեղ շարունակում են: Ոչ ոք չի կարող յանդգնել ասելու՝ թէ մի ժամանակ յետոյ գլուխն իւր վրայ կը մնայ:

Անգլիական նոր հիւպատոսը շատ ցած դեր է կատարում գէպի հայերը, նա բառի բռն նշանակութեամբ ոստիկան է:

Վասպուրականի Դաշնակցութեան Կեդրոնական Կօմիտէի հայդուկային խմբերը, որոնք զրկւած էին մի քանի գիւղեր պաշտպանելու, մի մասը վերադարձաւ, նրանց մօտերին եղած գիւղերը չվնասւեցին:

—○—

ԵԶԻՒՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾՈԹ ԳԻՒՂԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մարտ 1-ին մի խումբ քիւրդեր յարձակում են

Համշպին գիւղի վրայ (30 տուն եզդի, 15 տուն հայ)՝ գնդակի են կապում: Սպառնալով, որ եթէ հայերին իրենց չյանձնեն՝ բոլորին էլ պիտի կոտորեն: Բացի դրանցից նրանց մօտ ապաստանած էին և սրանց հաշով ապրում էին մի քանի մերկ հայ ընտանիքներ, որոնք փախած էին զանազան գիւղերից աշնան կոտորածների ժամանակ: Եզիդների մէջ բաւական փամփուշտաւոր հրացան կայ. իսկոյն գուրս են թուզում և ամբողջ օրը գիմադրում համբիէներին: Գիշերը վրայ է հասնում: տեսնելով որ ուրիշ ճար չկայ, եզիդները նոյն գիշերը բոլոր հայերին փախցնում են մօտակայ Գօրծօթ հայ գիւղը, որը թէ լաւ պատրաստած: Չանցաւ եօթն օր, քիւրդերը ահագին բազմութեամբ շրջապատեցին Գօրծօթը: Այդ գիւղը, ինչպէս ասինք, լաւ պատրաստած էր Միաժամանակ Վանից գուրս է գալիս ուրարենորոգիչ յանձնախումբի “գիլաւորը (Գէրիկ) և Սարա գնալու պատրւակով, իր ճանապարհը ուղղում է գէպի Գօրծօթ: Աերջնական ճըշգրիտ տեղեկութիւն դեռ չէ ստացւած: Այսքանը յայտնի է, որ արիւնահեղ գիմադրութիւն է եղել: Գէրիկը գործը տակն ու վրայ է արել: Ամանք պատմում են, որ Գէրիկի գնալուց յետոյ Գօրծօթն յաղթւել է և ողբալի վիճակ ունի:

—○—

Ա Ս Ա Ր Ի Ն Ե Բ

6/18 փետրւար 96 թ.

Սարայի և Բօղազ-Քեսասանի արիւնահեղ կոփիներից յետոյ ոճրագործ կառավարութիւնը փոթորկի նման պայթեց ասորիների գլխին ևս: Աւերեց, աւրշտկեց Վասպուրականում գտնւած գրեթէ բոլոր գիւղերը: Նա կասկածում էր, թէ ասորիները յարած են հայ յեղափոխականներին և նոյն իսկ Սարայի կուռում նրանք հայդուկներին գիւրութիւններ տւած, մասնակցած են: Այդուն իսկուներին գիւրութիւններ տւած, մասնակցած են:

Նա ոտնակոխ անել տւեց ամբողջ 12 ասորի գիւղեր, նահատակեց տամնեակ անմեղ մարդիկ: Մի օրւայ մէջ գրեթէ մեր վիճակակից ասորի եղբայրները մերկացան, մնացին առանց հացի, պաղ թոնրան վրայ. իսկ գուրսը ցուրտ ձմեռ, սառնամանիք է: Կանանց բռնարեցին, ոչխար, տաւար, ցորեն ամեն բան սրբեցին ի բաց առեալ մի քանի գիւղեր, ուր գիմադրութեան պատճառով թալանը կիսով չափ եղաւ:

Գիւղերի, աւանների և թալանի ցուցակը:

1. Ս ա ր ա. 80 տուն: Բոլոր հայ խանութներն աւարի առած, կիսով չափ թալանւած: Ասորոց Մէլիքի՞ որ մի յայտնի, պատւաւոր մարդ է՝ բացակայութեան ժամանակ ամենախայտառակ կերպով թալանում են նրա ամբողջ գոյքը, թիւրք զօրապետի և գայմագամի հրամանով:

2. Ա ղջա չ ա յ. 30 տուն, թալանւած, Շամաշալուշէլի տունը վառւած է:

3. Ս ա թ ի Բ ա կ. 30 տուն: Կիսով չափ թալանւած:

4. Խ ա ռ ա լ ի. 40 տուն: Ամբողջովին թալանւած:

5. Փ ո ղ ո ւ ն ի ս. Թալանւած և ուսի եղբայր իւսաննամ սպանւած:

6. Գ ե ա դ ա լ ա վ ա . 25 տուն: Թալաննած կիսով
չափ, 8 մարդ սպաննած—երեք եղբայրներ՝ Շմօ, Քա-
նո և Լազար, 5 հոգի ել հեքքեարցիներ:
 7. Խ ն օ . 35 տուն: Ամբողջովին կողոպտւած:
 8. Է ր մ ա ն ի ս: Ամբողջովին կողոպտւած:
 9. Տ օ ն ի . 30 տուն: Կիսով չափ կողոպտւած, 4
կտրիթ և գեղեցիկ երիտասարդներ սպաննած, նաև,
Դլօ, Խւսուփ և Արդիկը: Յ հոգի վիրաւորւած:
 10. Հ ավլ ե ս օ ր . 20 տուն: Ամբողջովին կողոպտւած:
 11. Ս ե լ . 25 տուն: Ամբողջովին կողոպտւած:
 12. Խ ա ր ա պ ս ո ր . Ամբողջովին կողոպտւած:

ԹԻՒՐԳԻՈՅ ՀԱԿՐՁԵ

Այս քաղաքական բաննին մէջ հայոց հարցի մասին եւրոպական վեհանգիստութիւնն և մասունք կարծիքը Ներկայացնելով մեր հասարակութեան, նպաստակ շնչեր ընտրած ոչ զայն յուսաքրել են ու ու վարուեցին, մենք մըսն հասարամի ենք նպաստակին եւ պիտի շարունակենք մեր գործունէութեան ուղին։ Հարգ համարեցին սպասն երբեմն ամփոփ զաղաքարներ տալ մեր ժողովրդին, մանաւանդ թիւքանապերուն, որնք գրկած են օրիայ քաղաքական կարեւող տրամադրէն։

Հայկական հարցը, որ երբմն այլքան դուրսկց Մագլիս խորհրդարներ, այսօք կարծեն նաև պահ է. Երբեմնի որոտներուն սեռ կը լւաւ-
լիս մայս և մարտին մայնիկեր, որոնք կը հեղդուս միջազգային
նախարարութեանց մէջ: Սակայն Հայաստանի դժբախտութիւնը
հապար Անգլիայ ճականի վրայ ամօթալի արատ մը ծցեց. շատ աւ-
նակցած են ատիկա քարեպաշտ մնջելացիները եւ այդ արատն է
զոր Սուվարի կը չանայ մեղմննել նակատութիւն: Նաևստանին
զարելով. երբեմն կը փրփի, երբեմն կը քծին. եւ սուլթանը
մնիմութեան հրեշտակ մը կուգէ Ներկայացնել: «Հայկական կոսո-
ւածները, կրսէ պահպանողական պետք տարբեր կայսերի ազգու-
թիւններու եւ տարբեր զաւանանքի մեջեն ատիկութեան արդիւնք-
նեւ, սուլթանը անմեն է, իմ՝ մասիս պատասխանատութիւն չեմ
զունեա անոր վրայ, ինչպէս շատեր ուզեցն վերաբերեց Մենց պար-
պիկ միահամուր նահանջանութիւնով միայն կարող ենք ազգեւ
թիւբքին վրայ, մեր նաւերը չեն կրնար բարձրանալ Տօրոսի սարե-
րը: Խնամառն Մարքիզը կը խօսովանի թէ, մինչու ցարու թիւբքին
նկատմամբ իր քննած նիստ եւ յուրաքան մնիքը, դրական ար-
դիւնք չէր կարող ծննել բայց ստիպած էր մնիքը ընել քամի որ
նախորդ նախարարութիւնը այլ բուօք գէնքը ծգած էր միայս:

Ողջամտ լրագիրներ Մեծ-Բրյուսանից՝ Նախարարի մը բերնին մէջ անպատճեր կը համարեն Սալգըրի ճառը, որուն մէջ կը տես-նեն նեղութիւն մը և անողործ ծաղարան մը ամենաջաշատ կացու-թեան մը համեմէաս Սանգարն չաղական ճարցին մէջ եղաւ այն որ ինքն ան իր կոսի իր ինքն որի և կամ մանա կը նախարար:

արագ շատ զբ խօսք ու արագ ինք (զայ բայ) զա զատար:

Ազատական նախարարութիւնը և նկոյն պիտիւ թօխներու պիտին դէմ եւ ամենաիրահան լեզով զատափետեց եւ պահապակեց անոր տղապական ծառը, անարժան Սովորու անունին: Հարցրորդ մաս- նաւոր միջնունիք մի մը Սալապարի ճառոց բնակատեղու կըսէ, «Պա- տին նախարարապանոց ինչն էր», որ Մէնցը լնաւուաց մենակնուն մէջ գոյն ըլլապար դիւնանադիտական պատինախախնութ մտնենան եւ նա- խանադիտիթենան օրենքները կը կոչէր ի նարկին սուլթանի դէմ: Ես այժմ՝ նախարարով մեղայ կըսէ թիւսրից վեճանուին, զայն վշտարւած ըլլապան համար: Տարբոր կը կարծէ թէ, Սալապարի ինքանաւոր և շփոթ գնապական զաւանանցը Ծրուպաքի մէջ Թօխ- տանական առաջնութեան մասաւոր է:

սահմանական պարզությամբ առաջարկվում է ապահովագործությունը՝ ապահովագործության առաջարկական նախարարական, Սամացարքի իր կուսակցությունների վրա բարդաց մաղարանները կը ներքի ապահովություն կատարել են անհնայ կը ճարշածէ անոր ճախող բարձրական-ութիւնը՝ «ՄՏԲ»-ի, կրթ պատասխան պահու, Սասունի կոտրածին պատասխան ընթացիկ պահանջնեցնեա բարենքորովուներու ծրագրի մէ առաջարկեցնեն և պիտի շարունակենին մեր ճախտառ բարձրականութիւնը չպահանջնեա ճարշի մասին, Երևանական ընդէանուր ճամփարագլութիւնը մը կազմալիք եթէ պաշտօնէ չի նուանպինք Խօսքարին իր ապահովութեան մէջ կը յարանկի նախակն սահմանական պահանջնեան անոր ապահովագործութեան վրայ, մնչ զետ նոր եղ իր պահանջնեութեան առաջն պատշին օքա իշխանությունը թէ, չայկական նախույն մէջ պիտի շարունակէ իր նախորդի բարձրականութիւնը»:

Սալզպիր, կուտանսեան մեջ թիվը մի, խայտառակ ու արևատակ շարքներով կուգէ եր դիւնավարակն պարտութեան զիտակցութիւնը ծածկեց:

Թիւրքիան ամեն օր, գրեթէ ատեն ժամ, վիւսնազիտական դաշ-
լիճներուն սիլթ կը մատակարարէ, այդ մասին շատ հարուստ է:
Թիւրքիան բռնկած է: Հայուստանը, Մակեդոնիան, Կրիտէն մարդ-
կային իրառունք կաղպաղակնն, ապահովութիւն կը պահանջնեա ուլ-
ւանը Մուհամետիկի անունով կը մերժէ ժողովրդին բարօրութիւն
պարզենել:

Այս անզամ կերպի թէ, Յունաստանի Տամբրութիւնը պիտի հասովի են ուղղակի պիտի միջամտէ: Պոսոյ հնմեն զեսպանը, Մալ- քօգոստած, Խորդուր տաև սոլիֆանին, որ փոթայ յեղափոխու- թեան աշեցը առնեն ինք կը փափակի որ երկու երկիրներուն մէջ ծանր հնտեւանմբներ առաջ չի գան:

Կիբէկի երեխոյ, մայիս 24-ին թիւքք պահազօքքը քանի փողոց-
ներուն մէջ գրանունէից տուններն վրայ յարձակվից աւարի տվին
սպաննեցին 8 տոք, նշազվէ նաև Ռուսիոյ և Եղիսաբետի հրապա-
ռուններուն զավանները և հելլեն ընկերութեան գրծա-
կալը իր ընտանիքով:

Քըստոնեաները լեզապատճառ վենեքը ապաստանած են եւ ի-
բան գրէած կառնեան գլուխաց մանէշականներէն: Կը կարծիք թէ
պիտուղան կառապարհն է այդ կոտրածին թնապարհը:

զնակապահության և այլ վարչական քայլազգեցներ:

Հիմաստունները օգնութեան նամար պատեհաքանիւնն նաև երեսնդրեցին: Փրանսական, անզգիական, ուսական և իտալական մշյմէկ գրանցուրներ զայտ են. Մաֆիային անգվածներն նաև սեղումը մզ մասնաց պիտի ենչէ, ինչ յունական շատ մզ յածառքական կազմ ու պատրաստ են:

Վամսնի մէջ ճագար ճարիկը թիւքը զինուրներ պաշտպան և նու երեցալու քրիստոնեաններէ, որոնք են մկեցնեան օգնութեան և նույ գործերը: Կղզինեան կովկաս արիւնանեւ կրիւներ քրիստոնէից են մահմէպականներուն մծեն: Հրուարական եւ թղթատարական ամեն լուրակութիւն իւցաւ է:

յարմաքաւութեան առաջ է:

ՏԵՂԻՆՑԱՀԱՅ կը զի՞ն թէ, կտէտացիները գենք ու դրամ կը խնդրն Թիւրքիս խալիտակ լուծք մէկզի նենակւ համար, ներկա վարկեանը յարմաքայն ժամանակ կը նկատեն պղպահի գործողութեան մէ համար: Կերջապէս Կրիտէն ոսկի կանչած է անդորրութեան իր ուսանակ առանձնութեան:

Հակառակ չամենի վերջնու շնչակած բարենորդումներու ծրագրեն, հակառակ Փերղինանափ փառամթլեան եւ ցարքն բարեացակաց^(*) տրամադրութեան, Մայկողնին կը նկրուի, պէս և ուժանանակ կը փոխադրէ: Առանձու պատուհասաւ^Ա արասիակով կը դիտէ իր երկզին փարզեան առ փարզին անքամական, ու կասպանակ իր գանուն ննու նիբա ալ աերպակներու տակ ծածկն:

Սուլթանը որոշած է, քանի որ չի կրօսաւ առաք Թագավորի մը անուն վայելել, կուգէ զոյն պատմութեան մէջ՝ “Մնծ-Ռժաղործի” մը ամբարտ ճանէ Թիւրքիան կը քայլապի, Թիւրքիան բարորացն են թիւրքակն վահացած է. շատ աս ըմբռած նն ատիկան թիւրք անկից չայրի հասանաչները, որոնց կենց կրկն ազատական Թիւրքուուն թիւրմանվ կուզնէն իրենց ժողովրդուուն սփակնեցնել մտունապին Թիւր-

թիւն եւ քառէր կը կարդան ոտևնեան բրդ հասարակութիւններուն միանալ եւ փրկել նայենքը. մասնաւորապէս այդ քառէր ուղղած է նայ յեղափոխականներուն: Մէկից ծանր, կը պատճառ ՝Մէշվերժէ՛ և ՝Մաքան՛, ազգայն ատելութիւններ եւ ծեղ ծեղ քի ատանք, տապալներ երկիքը քանդու բնակալու. ժամանակ չկարանելու, մար համբաշխութիւնով յանձնիմութեան եւ ապա- տութեան դարաշրջան մը բանանք, հակասակ պարագային եր- կուցնիս ալ զո՞ պիտի զնանք Ռուսիո ընշաբանութեան: Այդ ճա- ներ անկեղծ եւ հայրենաէր սրտերէ կը բնին. բայց ափառ, որ մինչեւ առաջանակ չէին գանձ թիւքը խոժանին մէջ, ՚Դա- նակցութիւնը՝ սիրոց կը ողունէ բռնակալութեան զէմ կոի մէկնու համար ամեն հրաէր, բանից թարգման հանդիսացած է արէէ մանմէշական տարրի սոլոդներին, որի առթի ՝Մէշվերժէ՛՝ ՚Նի- տասարդ թիւքիո օրգան՝ գանձակութեանը կը յիշառակէ ՚Դրօ- շակէ՛ բռնած ուղղակիւնը: Մնիք մը մկանուններուն մզս հաւատարի՛, կը կունիք բռնակալնին, հարստանարիքներուն և բախտակիւններուն զէմ, նոյն կարիքից աշքոյն կը նայինք աշխա- տաւոր թիւքը հասարակութեան մրաց, բնչուէն հպուն:

Դեսպանները դիմումներ կցնեն Դրան մաս Ձերթուղի քրիստոնեաց գալուստական ընտրութեան համար։ Սուլթանը „Կավաշ եակաշ“ կը բաէ, զի գիտէ թէ Եւրոպան Երկայնական է և աշխատուէա-

կամ ներողականութիւնով կը շարժի: Եթզ կառաջարկեմ, որ հայ տնի կրօնափոխները վերադարձին իրմանց կրօնին, սուլթանական կառավարութիւնը կը պատասխանէ: Թէ, իր երկրին մէջ խղճի ա-գաւութիւնը ընդունած է եւ թէ կրօնափոխները նախայօժար ընդ- գիւտ են բարակական կրօնը, սական հրաման գրկաւծ է տուեն, որպէսզի քրիստոնէութեան դառնան:

* *

Եթզ սուլթանը Ռուսիոյ պէս պաշտպան մ' ունի ինչե՞ր չէ կա- րու ընեւ Ամեն բան զիէ ու վախիք գովկ նետր, կամ ցարի բանա- պետութիւնը: Համբէ ամսանման երախտափութիւնով լեցան ու էակի իր քարերաք, թանկազնին եւ հազարքիւով ընծաներով կը վարօատք ցարը, ցարուին, Լուզանովը, սայր քրոջ աղջիները, թուները եւայն եւայն: Սուլթանը երկենը կը թալանէ ցարերու, ցարուներու և անոնց զերգատաններու կուրծքերը և պարա- նցները զարգարելու համար: Ցարին թագաղութեան ատթիւ հա- զարաւոր ոսկիք արժուութիւնով գուարներու ու պատաշաններու ու- ղարկեցան նորէն: Սա կը յշեցնէ զեղնցիք զուղարքութիւն մի- Սուլթան Մահմետ Բ. Վոռած ըլլալով Ինչանդիոնի կայսրութեան վերջ աւակ սկսան անափն պատրաստութիւններ տեսնել եւ Պափո- րի եւրոպական սփին վրայ Ռումէլիի քերքերը կը կառուցանէր: Յւնաց վերջին կայսը սարսափանար իր արևելի թշնամին մասիփութենէն եւ անոր վժուական զիտաւորութենէն, միծագին մնանմեր կը դրէք անոր, որպէսզի սիրացանի եւ զադրեցնել տայ ընդերու կասուցումը, որոնք կապանայնին իր զանին: Բարեմիտ սուլթանը քթիծաղով մը կընդունէր այդ թամսկազնին նէրները, կը խմէր Կոստանդնուպոլիսի զրկած պատուական զինին եւ մասնական խափը կը պատիքէր իրգործաւորներուն, որ շուտով մասնեն թիր- դերը:

Նիկուն խերը տեսնէ այդ արինուոր ընծաներուն:

Թ Ռ Ո Ւ Յ Ի Վ Ի Կ Թ Ե Բ Թ

Հ. Յ. Գ Ա Զ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն № 3

25 Մարտ 96 Վ Ա Ս Պ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն Ի 25 Մարտ 96 Կ Ե Դ Ր Ո Ւ Ն Ա Կ Ա Ն Կ Օ Մ Ի Տ Է Ւ

Դ Ա Յ Ա Յ Ե Ա Լ Ը Ա Լ Ը

Դաշնակցութեան Վասպուրականի կերպոնական Կօմի- աէն Ա. 2 «Թուուցիկ թերթով» յայտնեց իր կարծիքը սուլ- թանական Յանձնաժողովի մասին:

Մենք շատ ուրախ ենք, որ ժողովուրդը երբէք տրամա- դաւթիւն չի ցոյց տալիս խարդախ, կեղծ քարենորոգումնե- րին Ժողովուրդը չի ծախում անարգ կերպով իր բիւրաւոր նահատակների յշատակը, նրանց ձգտումները: Այս, դա- ուրախալի, միխթարական է:

Սակայն մի կասառ, դասակարգ կայ. դա աւելի լկտի է, քան տաճիկ կառավարութիւնը, դա միշտ դաւաճանել է մեր շահերը եւ այսօր անամօթաբար՝ լիլում է թիւրքի: մեր թշնամու ոսները ու մանումներա թեւերի տակ:

Ահա այդ դասակարգը քաշ անով իր ետեւից մի քանի միամիտներ յանդուում է ներկայանալ ժողովրդի կողմից իրը լիազօր եւ ընդունել բարենորոգումների խայտառակ փշանքները:

Ի՞նչ, ծախել ամբողջ ժողովրդի թափած արինը, կոխո- տել ամեն սրբութիւն... Դարձեալ զիմում ենք գրանց խիստ կերպով եւ առաջարկում զգոյշ կենալ, ետ քաշել այդ կեղդաս ձեռնարկից: Ով էլ լինին դրանք, յեղափոխական ուրը միշտ պատրաստ է շալողաւ այդպիսների զիմին: Սուրբ վրէժ է կանչում:

* *

Գ Ո Յ Ե Ն Ք Շ Ո Ւ Կ Ա Ն

Քանի կոտորածի տագնապներ անցուց Վանի շուկան եւ դեռ հայերը չմրատւեցան, չգդուշացան: Կերպոնական Կօմիտէս, Գաշնակցութեան միւս Կերպոնական Կօմիտէն- իից պաշտօնապէս համեցաւ որ՝ կառավարութիւնը գրեթէ ամեն տեղ ստոր, ցած կերպով ինարած եւ այնպէս սրի է քաշել ժողովրդին շուկաների մէջ: Օրինակ վերջնէնք եւ զգուշանանք:

Հարուստները միշտ վաս օրինակ են: տալիս ժողովրդին վերջին օրերա շուկան բանալու առիթը զրանք տեղին: Զլելով յեղափոխականների ձայնին, Ժողովուրդը լեցում է շուկան եւ մի օր հազարաւոր առոյգ ու անզէն երիտա- սարդների զիմիներ պիտի թափին հոն. զրա միակ պատ- ճառը կը լինան հարուստները: Կոտորածի համար ամեն մի- ջոց պատրաստ է. թիւրքը իւր գաւադրութիւնները վաղուց արդէն սարքած է. նա գաղտագողի լցրեց Վան զօրքով, թիւրք սմերը փախցրեց հայ թաղերից եւ այսօր հազարա- ւոր թշւառ զիւղացներ զուրս է քշում քաղաքից:

Լինենք զգոյշ, ամիոփ եւ պատրաստ. ու երբ սուլթա- նական հարուստը պազիթի մեր գլխին՝ զիմագրենք բուռն կերպով եւ յամառ: Ժողովովով լցրեց զան զօրքով, թիւրք սմերը փախցրեց հայ թաղերից եւ այսօր հազարա- ւոր թշւառ զիւղացներ զուրս է քշում քաղաքից:

Հայե՛ր, չբանանք շուկան:

Նիրացիութիւնների ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Գաշնակցութեան Կերպոնական օնդուկի մէջ ստացւած են.

Կարուս 50 օսմ. ոսկի, Փայլակ 15 օսմ. ոսկի, Ա- Խնձոր 33 օսմ. ոսկի և 8 ֆրանս. ոսկի, Եռանդ 3 անզը ոսկի:

Մանաքոյի հայ. հասարակութիւնից 4000 դրան:

Բլուր քաղաքէն. — Գրիգոր 108 դհ., Սիրուն 540 դհ., Սուլր 540 դհ., Արծիւ 10 մէճիտ, Երկաթ 540 դհ., Յակոր 216 դհ., Դաշոյն 10 մէճիտ, Սև-Լեռ 540 դհ., Մանուշակ 20 դհ., Զարմայր 10 մէճիտ, Բ. Ե. 100 մէճիտ, Հատու իւ. 100 դհ., Լեկոն 110 դհ., Խաչուկ 50 մէճիտ, Շանթ 120 դհ., Ս. Եղբարը 54 դհ., Սաթենիկ 5 դհ., Մկրտիչ 500 դհ., Սիրուն 20 դհ., Ճնշղուկներ 120 դհ., Գայլ 500 դհ., Խորէն 216 դհ., Պողպատ 800 դհ..

Հրամ ք. 1 Երկաթուղոյ բաժնետոմս, Կտրիճ 20 դհ., Կ. Կ. 2700 դհ..

Նորից խնդրում ենք հասցէն գրել պարզ և ու- ր ո չ հակառակ գիպաւծում մենք անկարող ենք լի- նում բաւարարութիւն տալ մեզ գիմողներին:

Հակառակ քանիցս արած մեր յայտարարութեան, շատերը շարունակում են ծրարի վրայ գրել Երկու հաս- ցէներին Ել. ուստի մենք ստիպւած ենք Հանել Լոն- դոնի հասցէն:

Դաշնակցութեան անծանօթնեսից խնդրում է Թղթակցութեան եւ սիրատութեան համար զիմնել:

Արմեն-Գասպար, poste restante. Carouge (Suisse)

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան: